Գավառի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ «Սարուխանի թիվ 2 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար

«Սարուխանի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթին մասնակցելու իրավունք ունեն տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, չափահաս, ՀՀ գործունակ այն քաղաքացիները, ովքեր ունեն՝

1) բարձրագույն կրթություն

2) կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով վերապատրաստում և նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք /հավաստագիր/, ձեռնարկատիրական կամ կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա ստաժ կամ հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ՝առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ՝ հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N224-Ն որոշման

9-րդ կետով սահմանված պահանջները

3) իրենց պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն /ՀՀ Սահմանադրություն, Կրթության մասին ՀՀ օրենք, «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք, Աշխատանքային օրենսգիրք, Գնումների մասին ՀՀ օրենք, ՊՈԱԿ-ների մասին ՀՀ օրենք, համապատասխան ոլորտի ՀՀ օրենսդրություն և այլ իրավական ակտեր/

4) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն

5) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

6) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ, ենթակաների հետ վարման անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն

7) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն

Տնօրենի համար դիմորդները պետք է բավարարեն «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով սահմանված չափորոշիչներին:

Մրցույթը կկայանա 2023 թվականի նոյեմբերի 30-ին ժամը 15^{00}-ին, Գավառի համայնքապետարանի ավագանու սենյակում /հասցե՝ Գր. Լուսավորչի 12/

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում.

2) 1 լուսանկար 3Х4 չափսի.

3) նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի Հավաստագիր,քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին.

4) ինքնակենսագրություն.

5)անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի /արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները/.

6)տեղեկանք մշտական բնակության վայրից

7) հրապարակված հոդվածներից կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /դրանց առկայության դեպքում.

8) մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 10^{00}-ից մինչև 17^{00}-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից, Գավառի համայնքապետարանում /ք. Գավառ Գրիգոր Լուսավորչի 12/:

Մրցույթների անցկացման վայրի, օրվա և ժամի հնարավոր փոփոխությունների մասին կհայտնվի լրացուցիչ՝ մրցույթից առնվազն մեկ շաբաթ առաջ:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2023 թվականի նոյեմբերի 20-ն է: